

ԱՐԱՄԻԿ ԿՈՒԳԱՅ ՕՓԵՐԱՅԻ ԿՐԱՊԱՐԱԿԵՆ

ԳՐԵՑ ՅԱԿՈՒՔ ՊԵՔԱՐԵԱՆ

Արամիկ, հազիւ երկու տարեկան դանդաղահասակ մանչուկը, թսթիկի հասակով, դուռը ու կլոր մասկոյտ մը, իր ծեփծեփուն շարժումներով, ամէն ինչ կապկելու բնածին հակումովը, բայց մանաւանդ (դեռ վերջերս լեզու ելած) իր չլիտցած հայերէնովը, դարձած է շէնքի բնակիչներուն դաստիարակի եւ դուարճութեան դիտար հերոսը:

Մեծ ճարտարութեամբ կը կապկէ զինք շրջապատող անձերուն յատկանշական թերութիւնները կամ շարժումները, մէկուն յօրանջելը, միւսին խնդուքը, կամ քարուածքը եւ այլն: Բայց Արամիկ, վերջերս մտահոգած էր մեզ, երբ իր չլիտցած լեզուներուն վրայ աւելցուցած էր նաեւ թրքերէն քանի մը ընթացիկ բառեր դորս սորված էր թրքական հեռատեսիլէն ու ստիպած մեզ՝ թէկուզ անտեղիօրէն, կասկածիլ իր հայրենասիրութեանը, սրահանջատիրութեանը, ու «յանձնառու Երեսօտար մը» ըլլալուն վրայ, թէեւ միշտ ալ Արամիկ մեր կասկածը անմիջապէս կըրցած էր փարատել, երբ «դուն ի՞նչ ես» մեր հարցումին, անակամօրէն ոտքը դետին զարնելով պատասխանած էր՝ «ես հա՛յ եմ»:

Ամիս մը առաջ, շէնքի դրացիները, համրուելով, զիրկէ-զիրկ փոխանցելով ու պա՛րպա՛յ բացազանչութիւններով ճամբու դրած էին թսթիկ Արամիկը, որ իր ծնողքին հետ մէկ ամսուան այցի կ'երթար Հայաստան:

Այն օրէն որ Արամիկին հայրը, ընդառաջելով հայրենաբնակ ազգականի մը դրկած հրաւիրադիբին, որոշեց ճամբորդել, այդ օրէն ասդին դիտուն տեղացած էին դրացիներու եւ բարեկամներու յորդորները, խրատները, «եղիւ խօսք»երը...:

- Ես ապու Արամ, Հայաստան երթալու ատենը դուար, չե՞ս լսեր այդ տեղի ցոյցերուն մասին, դորձադուլներուն մասին, իրարանցումին մասին...:

- Գիտեմ, դրացի գիտեմ, բայց հոգ չէ, մենք ալ կը մասնակցինք ցոյցերուն:

- Ես ըմ Արամ, դո՞նէ դո՞ւն խօսք հսակցուր ամուսինիդ: Այս Հայաստան երթալէն վազ անցէք, յետաձգեցէք: Ծա՛տ վրտանդաւոր է. ինչ կ'ըլլայ, ինչ չ'ըլլար, չենք զիտեր: Կ'ըսեն՝ բանակ իջեր է, թնդանօթներ, զինուորներ, հրասայլեր, հելի-փոփթըր կը դառնայ Երեւանի վրայ: Գո՛յց, դորձադո՛ւլ, նստացո՛յց, կրակմա՛ր, հսկո՞մ: Աստո՛ւած չընէ՛ մէյ մըն ալ հաշուի մէջ չեղած գէշ բաներ եթէ պատահին, ի՞նչ պիտի ըլլայ ձեր վիճակը...:

- Ի՛նչ կ'ուզէ թող ըլլայ: Այդքան հայերուն ինչ որ պիտի ըլլայ, մեզի ալ թող ըլլայ:

- Ես ապու Արամ, ըստ իս ձեր երթալը սա խառնակ օրերուն, խենթութի՛ւն է, անիմաստ է այսքան դրամ պիտի ծախսես, նաեւ՝ պարապի, որովհետեւ իբրեւ քուրսք համհոտ պիտի չառնես...:

- Ես արդէն քուրսքի հոգեբանութեամբ չեմ մօտենար այս հարցին:

- Դուն գիտես, եղբայր, ազատ ես: Բայց վայելք չկա՛յ, հա՛: Օրփեսքով տեղերը դոց են կ'ըսեն-խմիչք չկայ, ճաշարանները դոց են կ'ըսեն, օփերայի մէջ ներկայացում չկայ կ'ըսեն...:

- Է՛, լաւ, լաւ: Օփերայի մէջ ներկայացումն ալ պակաս թող ըլլայ. ինձի համար կարեւորը օփերայի դուրսի ներկայացումը տեսնելն է, զգալն է, ապրիլն է...:

- Այլեւս ներկայացումները դո՞ւրսը պիտի խաղան, Ապու Արամ

- Այո, միշտ դուրսը, հրապարակի վրայ, բայց երկինքի տակ...:

- Ինչու ներսը չեն խաղար, նորոգութի՞ւն կայ: Բայց կարծեմ դեռ վերջերս նորոգուեցաւ:

- Կրնայ ըլլալ. բայց հիմա ալ հոգիներո՛ւ նորոգութիւն կայ...:

- Ինչպէ՞ս թէ հոգիներու նորոգութիւն: Գո՞նէ լաւ խաղցող ներ կա՞ն. նշանաւոր դերասաններ կա՞ն, սանկ՝ Սօս Սարգսեան մը, Վարդուհի Վարդերեսեան մը...:

- Հայ ժողովուրդն է զլիտար դերասանը, ներկայացումին նիւթն ալ՝ «Ղարաբա՞ղ թէ Արցախ»...:

- Չեմ հասկնար...:

- Եղբայր, հասկցի՛ր այլեւս, մեոցուցի՛ր ինձի...:

Օղակայանի շուրջն ենք: Յուլիսի կիզիչ արեւին տակ, կը սպասենք հայրենիքէն վերադառնալիք օղանալին, աւելի ճիշդը՝ թսթիկ Արամիկին, որուն մէկ ամսուան բացակայութիւնը շատ զգալի դարձած էր շէնքին մէջ, առաւել անհամբեր էինք լսելու Սպասման տաժանքը կը սկսի, ու մէկ ժամը, անցնող մէկ ամիսէն աւելի երկար ու անհանդուրժելի կը թուի:

Եւ ահա՛ Արամիկը:

Հօրը շարակը նստած, դէպի մեզ կուգայ ու մեր վրայ նետուել կ'ուզէ: Գիրկէ-գիրկ ողջադուրումի արարողութիւնը վերջանալէն ետք, կը մօտենամ իրեն եւ հին օրերու պէս կը հարցնեմ.

- Արամիկ, դուն ի՞նչ ես:

Արամիկ փոխանակ առաջուան պէս «ես հա՛յ եմ» պոսալու, բունցեցիկները օղին մէջ, ըմբոստ ցուցարարի պէս ճօճելով կը դոջէ.

- Ղարաբաղը մե՛րն է...:

Արամիկ, սրահանջատէր ու յանձնառու հայ ժողովուրդին կրտսերագոյն ներկայացուցիչը, ամառուան մը մէջ տարիներո՞վ մեծցած, երկու բառով կուտայ իր հայրենական սպաւորութիւնը: Ըստ երեւոյթին, օփերայի բացօթեայ ներկայացումը մեր պզտիկ հանդիսատեսին օձիքէն ալ ընձած էր:

Հալիկ